



Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամ (ՓՄԲՀ)

ԿՈՉ – ՈւՂԵՐՉ

Փոքր և միջին ձեռնարկատիրության համար արտոնյալ հարկման համակարգի կիրառման վերաբերյալ

Հենվելով “Փոքր և միջին ձեռնարկատիրության պետական աջակցության մասին” ՀՀ օրենքի դրույթներին,

Առաջնորդվելով “Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամի” կանոնադրությամբ,

Համակված Հայաստանում փոքր և միջին գործարարության շահերի պաշտպանության վճռականությամբ,

Անհանգստացած այն հանգամանքով, որ մեր երկրում փոքր և միջին բիզնեսի հարկման համակարգը կատարում է բացառապես ֆիսկալ դեր և շուկայի զարգացման լիարժեք խթան չի հանդիսանում,

Հաշվի առնելով փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման դերն ու կարևորությունը առաջիկա տարիներին երկրի տնտեսական զարգացման համար,

Հիշեցնելով, որ պետությունն ի վիճակի է պայքարելու բնակչության աղքատացման դեմ՝ ստեղծելով պայմաններ, որոնց առկայությամբ գործարարությունը կդառնա հեղինակավոր, օրինական և ազատ՝ պետական ռեկետի թիրախ հանդիսանալուց,

Նշելով, որ փոքր և միջին գործարարության զարգացման համար նպաստավոր պայմանների բացակայությունը հանդիսանում է տնտեսության բնագավառում երկրի ռազմավարական նպատակների դեմ ոտնձգություն,

Համամիտ լինելով, որ պետությունը պետք է ընդունի և կիրարկի արդյունավետ օրենսդրություն փոքր և միջին գործարարության բնագավառում,

Ելնելով հասարակության գիտակցության մեջ ձեռնարկատիրության՝ որպես նյութական բարիքներ ստեղծող, կերպարի ձևավորման անհրաժեշտությունից,

Ելնելով նրանից, որ տնտեսության այս կամ այն ճյուղի առաջնային զարգացման համար անհրաժեշտ է կիրառել արտոնյալ հարկման սկզբունքը,

Նշելով, որ փոքր և միջին բիզնեսը դա տնտեսության այն ճյուղն է ուր հարկման ռազմավարությունը պետք է ուղղված լինի շահույթի օրինականացմանը և ոչ թե դրա ֆիսկալ վերահսկմանը,

Նշելով նաև, որ նման մոտեցումը թույլ կտա ավելացնել փոքր և միջին բիզնեսի օրինական սուբյեկտների քանակը և կնպաստի դրանց աշխատանքի կայունացմանը,

Համամիտ լինելով այն կարծիքին, որ փոքր և միջին ձեռնարկատիրությունը ոչ թե հարկահավաքման աղբյուր է, այլ ամենից առաջ.

- բնակչության ինքնագրավածությունն է, որի հետևանքով թեթևանում է աշխատանքի տեղավորման պետության հոգսը,
- հիմք է հանդիսանում ներդրումների պահանջի աճի համար,

- հանդիսանում է շուկայում ապրանքների և ծառայությունների մատակարար,
- հանդիսանում է վճարունակ առաջարկի ձևավորման չափորոշիչ,

Հաշվի առնելով, որ ներկայիս գործող փոքր և միջին բիզնեսի շահույթի հարկման եղանակը շատ ծավալուն և բարդ է, ինչը պահանջում է նաև հաշվապահական հաշվառման բնագավառի հատուկ գիտելիքներ որակյալ, բարձր վարձատրվող մասնագետների ներգրավում,

Հենվելով բիզնես միավորումների և ձեռնարկատերերի այն կարծիքներին, որ արտահայտվել և վավերացվել են կլոր սեղանների շուրջ քննարկումների ժամանակ,

Գիտակցելով, որ հարկային օրենսդրության մեջ փոփոխություններ կատարելու համար պահանջվում են լուրջ հիմքեր,

Հաշվի առնելով առաջարկվող միջոցների տնտեսական էֆեկտի նախնական գնահատականները,

Կոչ ենք անում միավորել ՀՀ Նախագահի, ՀՀ Ազգային Ժողովի, ՀՀ Կառավարության, հասարակական կազմակերպությունների և զանգվածային լրատվական միջոցների ջանքերը փոքր և միջին ձեռնարկությունների շահույթի հարկման համակարգում կից ներկայացվող լրացումներ ու փոփոխություններ կատարելու համար՝ փոքր և միջին ձեռնարկության գործունեության առաջին երկու տարում տալ «հարկային արձակուրդ», և հետագայում փոքր և միջին ձեռնարկության տարեկան շրջանառության 100 մլն դրամի մասով շահութահարկը նվազեցնել 50 տոկոսով:

«Փոքր և միջին բիզնեսի հիմնադրամը» պատրաստ է բոլոր շահագրգիռ կազմակերպություններին և անձանց տրամադրել փոքր և միջին ձեռնարկությունների արտոնյալ կարգով հարկման վերոնշյալ առաջարկությունների իրավաբանորեն ձևակերպված տեքստը, ինչպես նաև տնտեսական էֆեկտի գնահատման արդյունքները: